

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Մշակի տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատան (Բաղրատայա և Բարձրակապ փողոց). անկիւնը:

Ուրիշ քաղաքներից պէտք է գրիմը այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Նուաճումների ճրագրութիւնը. Ներքին ջանքեր.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բովանայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական վերջին դէպքերը. Կրէֆուսի գործի պատմութիւնը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ԽԱՌԻՆ ԼՈՐԻՆԻ.— Գրողի օրագիրը.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՑԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ թէ՛ վրացի:

ՆՈՒՃՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊՈՅՐԸ

Ամերիկացիներն էլ վարակվում են մի-լիտարիզմի ոգով. Այն փառաւոր յաղթութիւնները, որ նրանք տարան Կուբա-յում և Ֆիլիպինան կղզիներում, կուբա-յորն անգրապալանտեան հանրապետութեան գործողներին: Ամերիկայից այս ևս չեն կամենում ձեռքից բաց թողնել Ֆիլի-պինան կղզիները և մասաչուսեթս քաղաքը: Քաղաքական գործողները իրանց ձառներում և յօդաւորներում սկսում են ասպետացանք, որ Միացեալ-Նահանգները պարտաւոր են փոխել իրանց քաղաքակա-նութիւնը, հեռու չը մնալ եւրոպական քաղաքական աշխարհից, միջամտել, երբ այդ պահանջում են Ամերիկայի շահերը և նուաճել նոր հողեր՝ քաղաքակրթութեան և Ամերիկայի բարօրութեան համար: Այդ բոլորն իրագործելու համար անհրաժեշտ

է ունենալ մշտական զօրք, որ Ամերիկան պահում էր շատ սահմանափակ թվով, ուստի և հրապարակի վրա է գրվում նոյն պէս ուժեղ և մեծ զօրք կազմակերպելու խնդիրը:

Նիւ-Եորկում հրատարակվող նշանաւոր «Forum» ամսագիր վերջին համարում գե-տեղված է մի յօդուած, որ իր ոգով նո-րութիւն է կազմում ամերիկական լուրջ գրականութեան մէջ: Նա խօսում է ամե-րիկացիների համար մինչև այժմ օտար և խորթ եղած հարցերի մասին այնպիսի զմայլունքով, որ յատուկ էր միայն եւրո-պայի պատերազմաւոր քաղաքագէտներին: Ամսագիրն առաջարկում է նուաճումների և միջազգային քաղաքականութեան մի ծրագիր, որով Միացեալ-Նահանգները պէտք է այսուհետև ղեկավարվեն: Այդ ծրագրով առաջարկվում է, որ Անգլիան և Ամե-րիկան միանան ընդհանուր ոյժերով գոր-ծելու եւրոպայի միւս պետութիւնների դէմ: Այդ միութիւնը պէտք է իր կող-մը բաշխէ և նոյն իսկ ընկերացիներ իր հետ Նապոլիոնի, փակելով եւրոպացիներին իրանց երկրում և թող չը տալով, որ նը-րանք դուրս գան Սև ծովից և Միջերկրա-կանից: Երեքպետեան այդ նոր դաշնակցու-թիւնը իշխելով ծովերի վրա, իր ձեռքին կունենայ երկրագնդի ամենամեծ վաճառա-

նոցները, որոնցով կարող է առ միշտ ապա-հովել իր արդիւնագործական զարգացումը: Անգլոսաքսոնական ցեղը կը գրաւի առաջ-նակարգ տեղ երկրագնդի վրա և իր կուլ-տուրական ընդունակութեան ամբողջ ոյ-ժով կը տարածի քաղաքակրթութեան լայն հիմունքները բոլոր երկրներում:

Ահա այդպէս է նոր ուղղութեան ծրագիրը: Նուաճումները և միլիտարիզմը քաղաքակրթութեան անուշով պէտք է դառնան սկզբունքներ, որոնց համար նոր պիտի պաշտամունքներ ստեղծեն Փրանկ-լինի յետնորդները, մոռանալով մեծ հան-րապետութեան անհատական միջազգային քաղաքականութիւնը: Ոչ: Իրերի յօդիւն-դիւններն և թեւադրէր ամերիկացիներ-ին: Երանք սկսեցին պատերազմ ոտնակոխ եղած մարդկային իրաւունքների համար: Դա պատիւ էր բերում հանրապետութեան, նրանք պէտք է միան պատերազմի շարժա-ռիթմերին և իրանց նախկին ծրագրին հաւատարիմ: Ապահովեն թշուառ երկիր-ների բարօրութիւնը և յետ քաջան: Նիւ-Ե-ժէ ինչով պէտք է զանազանվեն Ամերի-կայի նուաճումները այն նուաճումներից, որ մինչև այժմ լինում էին եւրոպայում, որտեղ նոյնպէս ամեն մի պատերազմական անարդար քայլ՝ արդարացիում էր քաղա-քակրթութեան անուշով:

ՆԵՐՔԻՆ ԶԱՆՔԻՐԸ

«С. Петербургскія Вѣдомости» լրագրի աշխա-տակից պ. Վլադիմիր Գոլոմոյսեւի այդ վերնա-գրով մի յօդուած է տպել, որի մէջ իրան յա-տուկ կրակոտ ոգով խօսում է Վիշնիւր կայսրի ճանապարհորդութեան մասին:

«Հասել է ժամանակը, ասում է նա, երբ ա-մենք, որոնց համար թանկ են քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան աշխուրդները, պիտի ձայն բարձրացնեն և խօսեն ընդդէմ այն փորձի, որ անվերջ է սրբազան սկզբունքները քաղաքական խաղի գործիք դարձնելու: Համար: Հասել է բարձր ձայնով խօսելու և առարկա-ները իրանց իսկական անուշով կոչելու ժամա-նակը, որովհետև քրիստոնէութեան՝ այժմ ծանր հարուած է հասցնում:

չև անգամ խոստովանութեան ցուցակ է գտել 1705 թվականին վերադրված, որտեղ հայորդ-վողների ազգանունները ամբողջովին վրացերէն էին: Ահա՛ այն նոր փաստերը, որ փոշիների տակից լայն են հանել և այնքան աղմուկով ներկայացնում են մամուլի մէջ: Ճշմարիտն ա-սած, մենք կասկածում ենք, որ յօդուածագիրն անձամբ տեսած լինի այդ բոլոր ձեռագրիները, որովհետև իր գրելու ձևից երևում է, որ նա «ի լրոյ» է միայն պատմում: Ինչպէս այդ ձեռա-գրիները գտնէ մեզ համար կարևոր մասերը բնագրի խօսքերով և անփոփոխ առաջ չեն բերված, որպէս զի կարողանայինք դատել թէ ինչ է նրանց իսկական բովանդակութիւնը, որքան կարևորութիւն ունեն և որքան հաւատ կարելի է ընծայել դրանց: Միմիայն պատ-մութեան վրա հիմնվելով՝ չարժէ որ և է ըն-նդակաւ ակնարկ գցել այդ ձեռագրիների բովանդակութեան վրա: Այնու ամենայնիւ ըստ էութեան՝ այժմից կարելի է պատասխանել, որ այդ պարագան, այսինքն եկեղեցական ձեռ-ագրի և ազգանունների վրացերէն լինելը ոչ մի ձեռնարկային նշանակութիւն չունի ապացու-ցանելու համար, թէ նրանց տեքստը ցեղական ծագումով վրացի-կաթոլիկներ են եղել: Որով-հետո՞ Վրաստանում այդ ժամանակ (XVIII դար) և դրանից էլ յետոյ բոլոր ժողովրդեան միակ գործածական լեզուն վրացերէնն էր: Դադա-նիք չէ, որ վրացիայի քաղաքներում և գիւղե-րում վրացերէն լեզուն մուտք էր գտել և տը-րում էր նոյն իսկ լուսաւորչական հայ-ոց եկեղեցիներում, մինչև մեր դարի կեսերը և գուցէ աւելի էլ մօտ: և զարմանալի չէ եթէ ծնածնների և սեռածնների ցուցակները

«Ահա մի քանի տարի է, հայկական կոտո-րածների ժամանակից, որ Վիշնիւր II բացար-ձակ հովանաւորում է Քիւրքիային, ուր դէպի պետութիւնը ունեցած սովորական ատելու-թիւնը այժմ քրիստոնէական սրտով արեւա-բար ոչնչացնելու ընաւորութիւն է ստացել: Պաշտօնական Գերմանիան—ի հարկէ գուտ նիւթապաշտական գրգռմանից ստիպված—իշ-խանութեան սկզբունքը կրօնի գաղափարից և խղճի սկզբունքից բարձր է դասում: Աստուծու և կրօնի մասին եղած հասկացողութիւնները Բերլինում հպատակեցրած են քաղաքական մի-տումներին: Այս սուլթանը հասկացան ալը: Ամ-բողջ վերջին ժամանակները Քիւրքիայի այս և այն կողմում թափվում էր քրիստոնէական ա-րիւնք: Մինչև Վիշնիւր II-ը Քիւրքիա հասնելը, ինչպէս նաև այն ժամանակը, երբ նա այդ երկ-րում է գտնվում, քրիստոնէական կոտորածը, հալածանքները և ամեն տեսակ արինահեղ դէպքերը չէին պակասում: Յիշե՛ք Կրեմլին, ուր 600 քրիստոնէական կոտորելու համար մահվան պատժի ենթարկվեցին միայն 10—15 մարդիկ, յիշե՛ք Բերանին, չեքնօգործական սահմանի վը-րա, ուր արևել թափվեց երկու անգամ, յիշե՛ք արեւահեղ ընդհարումները սերբ-թիւրքական և բոլղարո-թիւրքական սահմանների վրա, յետոյ հայերի կոտորածը Վանում, ուր, ինչպէս երե-ւում է, ինչ որ շատ լուրջ բան է պատահել, դատելով իսկապատմութեան զեկուցումներից և այն հեռագրներից, որոնք լուսարձակում են Փղքը-Ա-սիայի գրութիւնը. վերջապէս այն խտուրթին-ները՝ որոնք գործադրվում են հայերի վերաբեր-մամբ Վիշնիւր II-ի ճանապարհորդութեան ա-ռիթմով, ցոյց են տալիս, թէ ինչ ուղղութեամբ է սուլթանը մտադիր օգտվելու «Գերմանական կայսրի բարեկամական զգացմանցներից»: Վանի դէպքերը կողմնակի կերպով վկայում են, թէ Քիւրքիայի հայոց վիշակներում նորից ար-ձակված է mot d'ordre...»

«Մանր ժամանակներ են գալիս: Սուլթանի հակաքրիստոնէական քաղաքականութիւնը ներ-դաշնակ է քրդական խմբերի ձգտումների հետ, նոյնպէս և թիւրք մուսուլման վարչութեան շա-հերի հետ, վարչական, որի առիթով պահվում է Կ. Պոլսում գերմանական հիւրերին լաւ ընդու-նելու և գերմանական ֆիրմաներին ռազմական նիւթեր պատուիրելու համար: Ինչ կողմից էլ

կամ այլ դրա նման ժողովրդական-եկեղեցա-կան գրութիւնները կազմվելիս են եղել վրացե-րէն լեզուով, քանի որ նոյն իսկ ժողովրդի հո-վիւնների համար (ի բաց չառնելով տեղ-տեղ նաև լուսաւորչական հայ քահանաներին) վրա-ցերէնն է եղել միակ մտադիր լեզուն: Թէ՛ ըն-տանեկան գործածութեան և թէ՛ յարաբերութեան համար ժողովրդի և իր քահանաների մէջ: Օրինակ՝ Թիֆլիսի հայոց Խօջկանցի գերբնասատանը—մինչև հիմա էլ կան բազմաթիւ գերբնասներ, որոնց վրա թէ՛ արձանագրութեան լե-զուն և թէ՛ անուշները գրուած են, նը, չը նայելով որ թաղվածները ոչ կրօնով կաթո-լիկ են եղել, ոչ էլ ծագումով վրացի, այլ լուս-աւորչական հայ: Իսկ անուշները վրացե-րէն լինելը հասկանալի է նրանով, որ հայերն առհասարակ ձգտում են յարաբերել իրանց անունն ու ազգանունները իրանց բնակած երկ-րում տիրող ձևերին, մինչև իսկ բոլորովին ան-ճանաչելի լինելու աստիճան: Օրինակներ բերելու պէտք չենք տեսնում. նոյն երևույթը նկատվում է աշխարհի ամեն կողմերում, ուր հայեր են բնակվում: Երբ ուսմանը Կովկասի տիրեցին, հայերը գեւ շարունակում էին կրել վրացերէն ազգանուններ, որոնց պատահում ենք նաև պաշտօնական դոկումենտներում *): Ուրեմն ինչ գործնապաշտ բան կայ, որ Վրաստանի լատինա-ձէս կաթոլիկ եկեղեցիներում վրացերէն լե-զուով ձեռագրի է գտնվել և հայ-կաթոլիկների ազգանունները վրացերէն են գրվել: Այդ մի և նոյն ազգանուններն այժմ էլ ռուսերէն են գըր-վում և ռուսական ձևով վերջանում, ումաք ուղղակի հայերէնից փոխադրվելով, ոմանք էլ

*) Տե՛ս է միջև այլու «Апѣтъ» Т I, докум. № 323.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԹԷՎՐԱՑԻ

Վրաց «Իվերիա» լրագրի № 211-ի մէջ ե-րեայ մի նոր յօդուած «Վրացի-կաթոլիկներին» մասին, որի հեղինակը հրաւէր է կարգում մեզ պատասխանել իր առաջ բերած նոր փաստերին (?:) «Իվերիայի» այդ յօդուածը ընկնելուց առաջ չենք կարող մեր պարմանքը չը յայտնել, որ մեր ընդդիմախօսը հրապարակ է դուրս գալիս՝ ա-ռանց անկախապէս ծանօթանալու մեր յօդուած-ների բովանդակութեան, որով ստիպում է մեզ կրկնել այն, ինչ որ արդէն բաւականաչափ բա-ցատրել ենք: Հարցի ամբողջական լուսարանու-թեան համար՝ մենք միշտ աչքի առաջ ենք ու-նեցել—որքան այդ հարաւոր է եղել մեզ,—«Իվերիայի» գրածների բովանդակ թարգմանու-թիւնը. այս կերպով, երբ հարկաւոր է լինում, մենք միշտ վրացի յօդուածները խօսքերը յիշա-տակում ենք նրա սեփական բառերով, որպէս զի մտքի ազաւարտան կամ որ և է թիւրիմա-ցութեան տեղիք չը տանք: Իսկ նա ընդհակա-ռակը՝ բոլորովին անձանութ է երևում մեր ա-սածներին և այդ պատճառով էլ մեր յայտնած մտքերը կամ չէ կարողանում, կամ զգուշանում է մեր սեփական խօսքերով յիշատակել: Բացի դրանից մեր ընդդիմախօսը սովորութիւն չունի աղբիւր յիշել կամ որ աւելի կարևոր է, իր զըտ-նել կարծած նոր, գրաւոր փաստի բնագիրը

նայեցէր զգերմանական կայսրի այս այցելութեան, դա մի մարտահրաւեր է՝ ուղղած քրիստոնեայ եւրոպային և ժամանակակից աշխարհի պաշտպանութիւն քրիստոնէութեան դէմ: Բայց Գերմանիայի այժմեան ընթացքը մի այլ կողմ էլ ունի. դրութիւնը վատթարանում է նրանով, որ նրա պատակ ընտրելով այցելել Քրիստոսի Սուրբ զերեւմանը, զգերմանական քաղաքագէտները տուել են իրանց ճանապարհորդութեան ռազմական քայլի նշանակութիւն, մի քայլի, որ պիտի նպաստէ «գերմանականութեան ոյժին» ի վնաս միւս ազգութիւններին և փոխանակ զարթեցնելու մարդկանց յիշողութեան մէջ մտքեր Քրիստոսի խաղաղ և փրկարար առաքելութեան մասին, աշխատեցին կաթողիկոսներին հովանաւորութեան հարցով քրիստոնեաների մէջ վէճերի, երկպառակութիւնների և կատաղութեան դուռ բաց անել: Այսպիսի կեղծաւորութիւնը աւելի է ստորացնում քրիստոնէութիւնը, քան մեր կրօնի հակառակորդներին խրախուսելը, քան կրօնի անուսով կատարած յախշտակութիւնները:

Այժմ նորից խաչում են Քրիստոսին: Ներքինի ջանքեր, որոնցով սուլթանը դարձրւում է գերմանական կայսրի ճանապարհը, հաշկում են մեր դարի վերջում քրիստոնէութեան ոչ միայն արտաքին, այսպէս ասած, նիւթական, այլ և հոգևոր ստորացումը... Ներքինի ժամանակ քրիստոնեաները տանջվում էին հեթանոսների ձեռքերից. այժմ իրանց քրիստոնեաներն են դարձնում իրանց հաւատը անուանարկութեան առարկայ, առաջ են քաշում երկպառակութիւններ և զրկում են իրանց կրօնը կենդանի ոյժերից և կենսական նշանակութիւնից: Քրիստոնէական արեւմուտը ողորդած ժամանակակից աշխարհը յուսով է նայում ապագայ դարին...

Այժմ նորից խաչում են Քրիստոսին: «Հասել է ժամանակը, երբ պէտք է յիշեցնել այն խօսքերը, որ ասաց Փրկիչը Պետրոս առաքելին. «Մի՞թե՞ Թոմասն, սիրե՞ս զիս... Արժեքս քոյնարս իմ: Զէ կարելի առանց բռնիքի թողնել այն փորձը, որ անում են ժամանակակից քրիստոնէութեան հիմքերի դէմ:

«Պաշտօն, ձրնապատ կերօնի նման այրվում է և այրվելով վերանում է քրիստոնէութիւնը թիւրքական Արեւելքում: Եւ լավում է ձայնը, որ հիշեցնում է յանդիմանաբար. «Մի՞թե՞ Թոմասն, սիրե՞ս զիս...»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՈՍՈՒՅԱՆԻ

Հոկտեմբերի 13-ին «Քիֆլիսի» հաստատ աղբիւրից՝ հաղորդում են, որ իբր թէ Մոսկվայի առաջ քահանայ պապական Սեդ-Վալիկանեան, գնալով Քիֆլիս, այդտեղի հայ քահանաների միջից կանխելով է իր համար մի օգնական ընտրել և բերել Մոսկվա: Արդ՝ ցանկալի է իմանալ, թէ արդեօք պէր-հայրը իրազօրութիւն ունի մայրաքաղաքների հայոց եկեղեցիների հոգաբարձու իշխան Ա-

լբրե յաջորդութիւն վրացեկներ: Կարող ենք ապել թէ այդ ազգանունների տեղերը ռուսական ձագուսն ունեն: Ուստի վերոյիշեալ 2—3 ձեռնադրերն ոչ մի կարեւորութիւն չենք տալիս մեզ հետաքրքրելու ինչորէն նկատմամբ, գոնէ այն ձեռք մէջ, ինչպէս որ «Վիքերիան» հաղորդում է նրանց մասին:

«Վիքերիայի» յօդուածի պիտաւոր փաստը այդ չէ սակայն, այլ այն, որ մի վրացի կաթողիկոս քահանայ Տ. Միքայէլ Մամբարաշվիլի, Վատիկանի արեւելիկական Էջատ նիւթ է գտել վրացիներին և կաթողիկոսների մասին, պապերի դրութիւնները վրաց թագաւորներին և թագաւորներինը պապերին: Այս ընդիւ է կեկեղեցականը համարեա երկու տարուց ի վեր բըրբում է Հռօմում: Դոմիտիոս վերաբերեալ յիշատակարանները, որ պէս զի գոնէ այն տեղ կարողանայ մի որ և է հիմնական փաստ գտնել վրացի-կաթողիկոսներին: Դատի օգտին: Սակայն, ինչպէս մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, «այդ յիշատակարաններն ծանօթ եղող մէկը յայտնել է արդէն նրան, որ այդ յիշատակարանները աւելի հայ-կաթողիկոսներին նպաստող նիւթեր են պարունակում քան լատինադէս վրացիներին: Այս տեղեկութիւնը հաստատութիւն է գտնում նաև նրանով, որ իբրեւ զլիաւոր արդիւնք Տ. Քաթարաշվիլիի ընդհանրա աշխատութեան, այժմ երեւան է հանվում մի ցուցակ, որից երեւում է, որ Քիֆլիսում 1829-ին կաթողիկոսների եպիսկոպոսական աթոռ է հիմնվել, որի վրա մինչև 1493 տարին, 7 լատին եպիսկոպոս են նստել, զօմէնիկ եպիսկոպոս կարգին: Այս ցուցակը ծանօթութիւններ է տալիս իւրաքանչիւր

բաժնէր-Լազարեանից և Մոսկվայի հայերի կողմից՝ այդպիսի մի տարօրինակ քայլ անելու: Ո՞վ է իրաւունք չորսնել նրան մի նոր քահանայ բերելու Մոսկվա, առանց այստեղի հայ հասարակութեան գիտութեան: Մոսկվայում քահանայական պաշտօնը ժառանգական չէ: Այս մէկը երկրորդ քահանայ ընտրելու իրաւունքը, կարծում ենք, ծխականներին է պատկանում և կարող ենք մեր կողմից յարել, որ Մոսկվայի հայ ծխականները դեռ ևս զրկված չեն յիշեալ իրաւունքից, և եթէ կարիք լինի մի երրորդ հոգի ընտրելու, ծխականները այդ բանն ընդունակ են անելու, առանց հայր Տէր-Վալիկանեանի միջնորդութեան: Վերջապէս՝ այստեղ քահանայական հարցեր արծարծելը ներկայումս աւելի քան անպատեհ է և անժամանակ. որովհետեւ վերջին երկու տարիները Մոսկվայի շատ հարուստ է հոգեւորականների կողմից: Այստեղ կան՝ բայց մեր երկու քահանաներից և մի սարկաւազից, նաև երկու վարդապետներ և երկու նոր սարկաւազներ, որոնք միշտ սպասարարում են մեր եկեղեցում: Եթէ երբեք տեղական քահանաները արձակուրդ առնելով, հեռանում են քաղաքից՝ յիշեալ երկու վարդապետները ամենայն յոյժարութեամբ փոխարինում են առաջնիւններին: Ուրեմն՝ հայր-սուրբերի ներկայութեան չնայելով՝ քահանայական հարցը մի քանի տարով կարելի է յետաձգել, որ նիւթական կողմից էլ չհասնուր է եկեղեցու համար:

Բայց ինչն է ստիպում հայր Տէր-Վալիկանեանին այդքան շտապել: Կրա պատասխանը նրա ծերութիւնն է: Զգարիւմ է, տէր-հայրը ծեր է, ուժից ընկած, այդ ծխականներից ամեն մէկը վկայում է: Բայց ո՞վ է հարկադրում նրան շարունակելու իր պաշտօնը, երբ այստեղի հայ հասարակութիւնը, իր ականաւոր անձանց բերանով, ըստիւրման անգամ առաջարկել է տէր-հորը՝ հրաժարվել քահանայադրութիւնից՝ ցմահ պահպանելով իր ամբողջ ռոճիկը, բընական արանը, վառելիք փայտը և այլն, որ պէս զի հարկը պահանջած դէպքում հասարակութիւնը կարողանայ մի ուրիշ քահանայ բերել տալ: Տէր-հայրը չէ համաձայնում: Երրորդ քահանայի ներկայութիւնն այստեղ ոչ ցանկալի է, ոչ էլ հնարաւոր է: Sapienti sat!

Խ. Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՐ

Վոլիկանեան բարձր իշխանութեան կարգադրութեամբ, հոկտեմբերի 16-ին, բեմվրդա սկզբից Քիֆլիսի քաղաքային ուղարկվալի մէջ: Բեմվրդային պիտի ենթարկվին ուղարկվալի դրամարկը և գործերը:

Մեզ հաղորդում են, որ Կարս-Քիֆլիսեան երկաթուղու գծով ներկայումս երթևեկում են ապրանքատար վագոններ մինչև Ղարաբախ. ճանապարհորդներ կարող են օգտվել դնացներից, եթէ ունեն թայտուկիւն երկաթուղու վարչութիւնից: Գնացքը ճանապարհ է ընկնում Նավթլուից չաբաթը երեք անգամ:

Հիւրեւ եպիսկոպոսի անձնի վրա, որ կապ չունի մեզ հետաքրքրող հարցի հետ: Իսկ թէ 1493-ից յետոյ եղել են այստեղ կաթողիկ եպիսկոպոսներ և որոնք են եղել, յօդուածագիրը խոստովանում է, որ ոչինչ տեղեկութիւն չունի այդ մասին և ապա աւելացնում է, որ XVI դարից վերջ այլ ևս կաթողիկ եպիսկոպոս չէ ունեցել Վրաստանը, այլ նրանց փոխարինել են այսպէս ասած՝ աբաբներ, որոնց վերջինն էր Տ. Դամիանոս, որը Վրաստան եկաւ Հէրաքլի թագաւորի մահից յետոյ, չորսուորորեք Գեորգիի թագաւոր դառնալը և յանձնեց նրան պապի բուլլան: Այս ծանօթութիւնները տալուց յետոյ, յօդուածագիրը յաղթական ձեով քայքայւնում է. «Եթէ Վրաստանում վրացի կաթողիկոսներ չը կային, հապա այդ եպիսկոպոսները ո՞ւմ համար էին նշանակվում, գոնէ այնպէս պարագայաբար նոստած հայերին կաթողիկոսացում էին: Զէ որ այդ բանը գտնել է ճշմարտութիւնից, որովհետեւ այդ ժամանակ հայերի թիւը շատ փոքր էր:

Շատ տարօրինակ գաղափար ունեն վրացի յօդուածագիրները գրական վիճաբանութեան վրա: Եթէ նրանք չարուսակ, ամեն մի յօդուածում, իրանց ասածները պիտի կրկնեն, առանց տեղեկանալու կամ յիշելու, թէ ինչ պատասխան կան հայ տրվել դրանց, այն ժամանակ կարող են գրել մի միայն իրանց համար և անվերջ յաղթութիւններ երևակայել իրանց օգտին. ոչ ոք չի ուզեալ իրանցարեւ նրանց այդ անմեղ զբօսանքը... Բայց եթէ լրջօրէն ցանկանում են հարցը լուսաբանված տեսնել, նրանք պէտք է լաւ ծանօթանան նաև իրանց ընդդիմախօս-

Հացի թանգանալու պատճառով Քիֆլիսի հացաւաճառները խնդրել էին քաղաքային ուղարկվալի բարձրացնել հացի սակագինը: Դուրսի կողմից ընտրված յատուկ յանձնաժողովը ընդեց այդ խնդիրը և գտաւ, որ կարելի է հացի գինը բարձրացնել առաջին տեսակը կէս կօպէկով՝ իսկ ստորին տեսակները քառորդ կօպէկով փոխել:

Այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 20-ին, պէտք է կայանայ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի նիստը, որ կը ընդի Քիֆլիսի այգեգործական դպրոցին վերաբերեալ խնդիրները և կընտրի դպրոցի համար նոր կառավարիչ: Խորհրդի այդ նիստին հրաւիրված են ներկայ լինելու ընկերութեան անդամներից շատերը:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻՑ սեպտեմբերի 27-ից մեզ հաղորդված է հետեւեալը. «Սեպտեմբերի 27-ին, կիրակի, Վարազդայ ս. Թալի տօնին, պատարադից յետոյ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ պրօֆեսոր Անդրէաս Արքունու յիշատակին: Յաջորդ Միխիլայ վարդապետ Տէր-Մարկոսեանը բարոյ խօսեց և անցնելով Անդրէաս Արքունուին՝ բացատրեց նրա նշանակութիւնը հայերի համար: «Ստարները, ասաց, հայերին ճանաչում են իբրեւ եսական ու նիւթապաշտ ազգ, Անդրէաս Արքունու պէս հայերն են, որոնք իրանց ընդհանուր մարդկային ծառայութիւնովը ցրում են օտարների թիւը կարծիքը մեր մասին»: Ապա խօսեց հանգուցեալի ազգային և ընդհանուր-մարդկային գործունէութեան մասին: Նկեղցում, տօնի առիթով՝ ներկայ էին տեղական ուսումնարանների սաներն ու սանուհիները իրանց դատարարակներով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՍԱՆ ՎԵՐՋԻՆ ԴԵՊՊԵՐԸ

Անցեալ չաբաթը հարուստ էր քաղաքական նորութիւններով: Ռուսաց արտաքին գործերի մինիստր Մուրավիեւի ճանապարհորդութիւնը, նրա տեսակցութիւնները Ֆրանսիայի և Աւստրիայի քաղաքական գործիչների, մինիստրների և նոյն իսկ հասարակական գործիչների հետ, արդէն ինչն ըստ ինքեան քաղաքական մի մեծ դէպք է նկատվալի: Ուշագրութեան արժանի է մինիստր Մուրավիեւի տեսակցութիւնը հայր Փէլլիք Շարմըտանի հետ, այն կրօնաւորի հետ, որը, իբրեւ «Oeuvre des ecoles d'Orient» կաթողիկ միսիոնարի գլուխ, այնքան նշանաւոր օգնութիւն հասցրեց Քիֆլիսի տոկատանջ և հարստահարված հայ ժողովրդին վերջին աղետալի տարիների ընթացքում: Մուրավիեւի ճանապարհորդութիւնը պարզեց և մի ուրիշ իրողութիւն, որը մինչև այժմ անյայտ կամ անորոշ էր մնացել: Ռուսաստանի և Աւստրո-Անգլիայի մէջ վաղուց, գոնէ թիւրք-թուրքական պատերազմից առաջ, համաձայնութիւն է եղել կայացած Բալկանեան թերակղզու փոքր պետութիւնների վերաբերմամբ: Բայց այդ բոլորից, կոմս Մուրավիեւի վիճի, այցելելով Պարիզ, կամենց է անձամբ

ների պատճառաբանութիւններին:

Մենք անցեալ տարի մեր առաջին յօդուածում («Մշակ» 1897 № 138) խօսելով կաթողիկոսեան ժողովրդի մասին, յայտնել էինք արդէն թէ XIII դարից սկսած դ օ մ ի ն ի կ ե ա ն ն երը հաստատվել էին Վրաստանում և սկսել կաթողիկոսութիւնը քարոզել և ապա թիչ վերջը («Մշակ» № 149) մանրամասն խօսել կաթողիկ եպիսկոպոսների խնդրի մասին: «Մշակի» ընթերցողին կրկնում լինենքով չը ծանօթացնելու համար, մենք աւելորդ ենք համարում նորից առաջ բերել այդ վկայութիւնները. բայց սա լաւ առիթ է պարզելու համար մի ուրիշ հարց: Նախընթաց յօդուածներում մենք անորոշ էին թողել այն կէտը, թէ տարածված էր արդեօք կաթողիկոսութիւնը Վրաստանում: XIV դարի սկզբին, երբ եպիսկոպոսական աթոռ նոր էր հաստատվել Քիֆլիսում և թէ որոնք են եղել այդտեղ առաջին կաթողիկոսները՝ հայերը թէ վրացիք: Մեր վրացի ընդդիմախօսը համոզված է երեւում երկու կէտում, առաջին որ Քիֆլիսում եպիսկոպոսական աթոռ հաստատվելը արդարացեալու համար անշուշտ հարկաւոր էր որ մեծ թիւով կաթողիկոսներ լինէին այդտեղ և երկրորդ՝ թէ այդ կաթողիկոսները վրացիներ էին քաղաքացիներ: Առաջին կէտի համար այսքան միայն կանխորդը, որ Հռօմի պապի վրաց սկզբաւորի մօտ կաթողիկ եպիսկոպոսոս նշանակելը բայց կրօնականից ունէր նաև քաղաքական նշանակութիւն, և դիտարկութիւն ունէր դրանով իր և միանգամայն կաթողիկոսեան ազդեցութիւնը տարածել: Հռօմ՝ այդ թւականին, Պարսկաստանում էլ եպիսկոպոսական աթոռ հաստատեց, բայց դա

ստուգել, թէ արդեօք որ և է փոփոխութիւն առաջ է եկել ֆրանսիական դորքի տրոմադրութեան մէջ՝ այն բոլոր մերկացումներից յետոյ, որոնք կատարվեցան վերջին ժամանակներս Իւրէյֆուսի գործի առիթով:

Ռուսաց արտաքին գործերի մինիստրի ճանապարհորդութեան հետ կապված է, ինչպէս երևում է, և կրետական հարցի վերջնական լուծումը: Այն վճռական դերքը, որ բռնեցին Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան սուլթանի դէմ և ստիպեցին նրան՝ անպայման հնազանդվել իրանց պահանջներին, թիւրքաց գործերը Կրետէից հեռացնել, սուլթանի զիջումը նոյն իսկ այն բաղկին, երբ իր բարեկեամ Վերջէյ կայսրը այցելութիւն պէտք է տար իրան և, ըստ երևոյթին, պէտք է օգնէր նրան, պարզ ցուց տուեցին, որ գոնէ այս անգամ չորս մեծ պետութիւնների կօնցերաք ֆիկցիա չէ, այլ իրականութիւն: Եւ մեծ պետութիւնները կամենում են աւելի առաջ գնալ, գործը կիսատ չը թողնել ու մի անգամ ընդմիջող վերջ տալ կրետական հարցին: Ինչպէս Պետերբուրգից հեռագրում են Daily Telegraph լրագրին, շուրջըս Կոպենհագէնում վերջնականապէս վճռվել է Գիօրգի իշխանի կանդիդատութեան հարցը Կրետէի ընդհանուր-նահանգապետի պաշտօնի համար: Ռուսաստանը հաստատ որոշել է առաջ մղել այդ թեկնածութիւնը, դրա հետ կապ ունի և Կ. Պօլսի ռուսաց դեսպան Ջինովիեւի իրական գնալը: Ասում են, որ Ջինովիեւին կը յանձնվի յայտնել սուլթանին, որ Ռուսաստանը բարեկամական զգացումներ է տածում Քիւրքիայի վերաբերմամբ, բայց մի և նոյն ժամանակ անպայման ցանկանում է, որ Գիօրգի իշխանը նշանակվի կրետական ինքնավար կառավարութեան պետ: Սուլթանը երկի այդպիսի վճռական յայտարարութեան առաջ կը խնարհվի և Կրետէին, վերջապէս, կը հասնի իր նպատակին՝ թիւթափելով անտանելի թիւրքաց լուծը:

Եւրոպական և ռուսաց մամուլը չէ ծածկում, որ կրետական հարցի լուծումով արեւելեան հարցը դեռ չէ լուծվում և մեծ պետութիւնների կօնցերաք դեռ ահապին գործեր ունի կատարելու, մինչև որ արեւելեան հարցը դոնէ իր սուր ֆազիսից դուրս գալ: Կրետական հարցից յետոյ, ասում է «Новое Время» լրագիրը, ամմիջապէս դալիս են Մակեդոնիայի և Հայաստանի հարցերը: Կրետական ժողովուրդը դաւանակից է ռուս ժողովրդին, բայց մակեդոնական ժողովուրդը և դաւանակից է և համարին: Իսկ Հայաստանը տանձնակից երկիր է: Այդ երկու երկիրները ևս հեծում են անտանելի ռուսութեան տակ և ժամանակ է, որ սուլթանը հասկանայ, թէ պէտք է վերջ դնել հարստահարութիւններին, կոտորածներին. ժամանակ է, որ երկու թշուառ ազգերը ևս ստանան Քիւրքիայում մարդկային իրաւունքներ: Մամուլի շատ օրգաններ համոզված են, որ մեծ պետութիւնների համեմատ և վճռական գործունէութիւնը բաւական է երկու հարցերը ևս խաղաղ կերպով լուծելու և այդ կողմից մեծ յոյսեր են դնում կոմս Մուրավիեւի ճանապարհորդութեան վրա:


Ապացուց չէր, թէ Պարսկաստանում կաթողիկոսութիւն շատ էր տարածված և թէ կաթողիկոսացած պարսիկների պատրաստի հօտ կար այնտեղ: Իսկ երկրորդ կէտի համար, որ իսկապէս չօչափում է ամբողջովին մեր յարուցած խնդրը, նա ոչ մի ապացույց չէ բերում իբրեւ հաստատութիւն իր կարծիքին: Իսկ մենք չենք վարանում այստեղ առաջացնել, որ մինչև այժմ մեր ծանօթութեան հասած բոլոր տեղեկութիւններն ու փաստերը խօսում են յօգուտ այն պնդման (assertion), թէ Վրաստանում կաթողիկոսութիւն ընդունողները ի սկզբանէ հայեր են եղել, անշուշտ ոչ բացառաբար, այլ ստուաբ մեծամասնութեամբ: Իբրեւ ապացույց՝ հրաւիրում ենք «Վիքերիայի» յօդուածագիրին ի նկատի առնել հետեւալ հանգամանքներն ու անհերքելի իրողութիւնները: Նախ՝ Վրաստանի քաղաքներում կաթողիկոսութեան տարածումը կատարվել է զըլ-խաւորաբար ղօմինիկեան կարգի հայուսիթոսներին ձեռքով, որոնք արդէն 1334-ին հիմնել էին իրանց վանքը Քիֆլիսում, վրաց թագաւոր թոյլուութեամբ: Այս լատինացած հայ կրօնաւորները բնականաբար աւելի շուտով իրանց ցեղակից հայերի վրա կը կարողանային ազդել, քան թէ ցեղով և լեզուով օտար վրացիների վրայ: Ժամանակը որ հայերն իրանց հայրենիքից անջատված և անօգնական գաղթականներ լինելով՝ աւելի ազատ կամ պատրաստ հող էին ներկայացնում, քան թէ վրացիք, որոնք ունէին սեփական քաղաքական-ազգային իշխանութիւն, որ անշուշտ մեծ արդեւք էր կաթողիկոսեան պրօպագանդայի համար: Իսկ

բովին բարեբաղող կերպով. ժամհղականները բարեկամացան ըրեստոնեայ ազգաբնակչության հետ, որը խնդրում էր նրանց նորից վերադառնալ և բնակվելն իրանց թողած հողերի վրա: Մեր զորքերին ուղղունեցին հիացմունքի աղաղակներով՝ ի պատիվ Կայսրի:			
ՊԱՐԻԶ, 18 հոկտեմբերի: Վճռաջինը դատարանը արտասանեց իր վճիռը: Դատարանն համարում է Իրեյֆուտի գործի վերաքննութեան պահանջն՝ ընդունելի և այդ պատճառով նա կրկին լրացուցիչ ըննութիւն անել: Դատարանն ընդունում է, սակայն, որ ներկայ դեպքում դեռ չէ կարելի դատաքննարկվածի պատիժը դադարեցնել, ինչպես այդ պահանջում է ընդհանուր պոկոլորը:			
ՔԱՌԵՂՎԱԿԻ, 18 հոկտեմբերի: Գերմանական կայսերական զոյգն ուղևորվեց Բաբելվադի, ուր հասաւ ժողաւորապէս ժամը 5-ին և ուր պիտի գլխավոր:			
ՊԱՐԻԶ, 18 հոկտեմբերի: Ֆրէյսինէ սկզբունքով համաձայնեց ընդունել զինուորական մինիստրի պօրտֆէլլը: Դիւպլինն յոյս ունի, որ վաղը կը կազմակերպի կարինէտը:			
«Rigaro» հաղորդում է, թէ Եստերհալիի աշունը ջնջված է պատուաւոր լեգիոնի ցուցակից: ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Կլիմատօրօգրափի, դիփօրօգրափի և բալնօրօգրափի ասպարիզում գործողների առաջին համառուտական ժողովը կը բացվի դեկտեմբերի 12-ին, Կայսերական զինուորական բժշկական ակադեմիայում: Վարժանական բանաստեղծ Յակով Պետրովիչ Պոլոնսկի:			
ՄԱՍՍՈՎԱ, 19 հոկտեմբերի: Բախէյտի սուլթանը, որին իտալական կոմսապրէ կանչել էր Աստաթ՝ խորհրդակցութեան համար, փախաւ Սուլթանի կողմնակիցների և իտալական հեծելազորների միջև կռիւ առջի ունեցաւ: Կարգը վերահաստատված է:			
ՎԻԵՆՆԱ, 19 հոկտեմբերի: Հիւանդապահ Պեխա վարժանից:			
ՏԵՐՈՒՄԱՂԱՎ, 19 հոկտեմբերի: Գերմանական կայսերական զորքը հասաւ այստեղ, այցելեց Փրէյսի գերեզմանի տաճարը և ներկայ գտնվեց Բեթլեհէմի աւետարանական եկեղեցւոյ ժամատապօլիսին:			
Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ			
Հոկտեմբերի 16-ին			
Եռօրեկ վրա 100 Ֆունտ արծե	93	ր.	75 Կ.
Բերքի վրա 100 մսրկ	45	»	70 "
Պարբէկ վրա 100 Ֆրանկ	37	»	10 "
Պօրտփոխի վրա	—	»	— "
Մարտիկի կուպոններ	—	»	— "
Բորսայի լիւթի	5 1/2	6 1/2	—
4% պետական բնուտ	101 1/8	—	—
4% ներքին փողատու լիւթ	101 1/2	—	—
4 1/2% դաւա. լիւթ. աղի, կալ. լաւիկ	96	—	—
4 1/2% փողատու, կալ. հող. լաւիկ	100	—	—
նրբեր 5% առաջին փողատու լիւթ	295 1/2	—	—
Երկր. երկրորդ	258 1/2	—	—
5% դաւա. լիւթ. աղի, կալ. լաւիկ	219 1/2	—	—
5% պետական երկաթուղ. բնուտ	—	—	—
Պետեր. բաղ կը. լիւթ. օր. 5%	—	—	—
Սուլփայի բաղաւ. կը. օր. 5%	100 1/2	—	—
Օղակային	99 1/2	—	—
Թիֆլիսի	99 1/2	—	—
Թիֆլիսի կալ. լաւիկ 6%	—	—	—
Երկր. — — 5%	99 1/2	—	—
Գու. լիւթի կալ. լաւիկ 6%	101	—	—
Երկր. — — 5%	100	—	—

(սահ. 20)



ТОВАРИЩЕСТВО
Брокеръ и К^о.
ИЗВѢСТНОЕ СВОИМЪ КАЧЕСТВОМЪ
УСОВЕРШЕНСТВОВАННОЕ
**ГЛИЦЕРИНОВОЕ
МЫЛО.**



5-11

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

ցանկանում է ժամանակը դառնի ԼՍՅՈՒՆ
ԼԵՁՈՒՅՑ ցնաանկաներում: Առաջատան ժամը
9-ից մինչև 12 ժամը:
Դիմել հետեալ հասցեով Գоловинскій, Посуд-
ный магазинъ Әліозова. 4—5

ԲԺՅԱՊԵՏ Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

ժամանակը կողորդել, ընթերցել և ակնհայտ հիշատակել
Թիֆլիսի:
Հնդուհում է 5—7 ժամը երկրորդան. Վերամի
նովակայա փողոց, տուն № 4, Դոմայի հանդէպ
(Կ. չ. ո.) 21—30

BATEAUX A VAPEUR FR

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՍԻԳՆ
Ն. ՊԱԿԵ

Կանոնադր և ուղղակի նաւապնացութիւն ՄԱՐՍԻ
Եւ մի անգամ, սկսած յուն
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, ժամեր
միջ՝ չորքշաբթի, 28 հոկտեմբերի (9 նոյեմբեր)
այսպէս չարտնակարար, երկու շաբաթը մի ան
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակ
պակաս գնորդով:
Ապրանքների և ծանապարհորդների ժամը
Եւ ըստ ըստի դիմել ընկերութեան գործակա
ԲԱԹՈՒՄԻՈՒՄ—պ. Վերամի գ. Մարսիոն, Նա
նեանին, Սիւրի փող. նախկին Արժանու բարձր
կինոնայա հրապարակ: ՆՕԿՕՐՕՍՍԻՑՍԿԿ—պ. Ս

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻՉ, ՈՒՆ

Ս. ՊԵՏ
Հնդուհում են երկու սեռի երկրանք
զարդներ ժամերու համար՝ БАБУ, полиц. у.л. д

Լ Ո Յ Ս

Մ Է Լ Ի Ք Ի

(Պատմական
Գիրք 1 ԲՈՒԲ. 30 Կ
Մարտիում է ԹիֆլիսիՈՒՄ—հեղինակի մաս
վաճառանոցում: ԲԱԳԻՈՒՄ—պ. Ներսէս Դա
ՆՈՒՆՈՒՄ—Բագրատ ՏԵՐ-Սահակեանցի գրավա
հեղինակի հասցէն՝ **ТИФЛИСЬ**,
ՎԱՀԱՌԱՀԱՆՎԵՑ Թիֆլիսի ԿԵ
Ե Ղ Բ Ա Յ Բ Ա Կ Ա Ն
ԹԻՐԻՔԻԱՅՈՒՄ Վ
ԵՐԿՐՈՐԷ, ՆՈՐԻՑ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳԻՐԸ ՀԱՆՍԱՐԱՀԱՆՈՒՄ
2-00 ВНОВЬ ОБРАБОТАННО
ЛИТЕРАТУРНО-НА
„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАД
Въ настоящее удешевленное издание, содержа
прозвѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, з
ствіями турецкихъ армянъ, а съ другой—съ быт
прошлагомъ и въ настоящемъ. Въ книгѣ приложени
вѣкъ) армяно-переселенцевъ, снятыя съ натуры, и
числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣз
скаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тон
Цѣна 3 р., съ и

Складъ въ конторѣ *Русскихъ Видомостей*
НВ. Лица, не окончившія счетовъ по 1-
шить окончаніемъ таковыхъ.
Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочув
объявленіе.
4—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐՈՑՆ ԱՌԱՐՅԱՆ

Մ Ի Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ

ցանկանում է հայերէնի և մասամբ ֆրանսերէնի
դասեր ունենալ, ամենաճեւանտու պայմաններով
Իրմէլ՝ Ներսէս Ներսէսեանցին՝ БАКАУ, Никол
евский переул., № 1, домъ Баранова. Երեկոյեան
6—7 ժամը: 1—5

1899 թ. ՊԱՏԻ ԵՒ ԾՈՅԻ
ՕՐԱՅՈՅՑՆԵՐԸ

ՀԱՐՈՒՍՑ ՅԱՆԿԱՐԱՐՈՂ ԵՒ ԵՐԱՅԱՀԱՆՈՂ

Ցանկացողները Թո՛ղ շտապեն մեզ
յայտնելու, որպէս զի Ժամանակին կա-
րողանանք հասցնել:

Թիֆլիս՝ Մակար Զմէկեան
(Է. չ.) 5—20

ԵՐԿՈՒ ՈՐԲ

գաղթական աղջիկներ աղերսում են բարե-
մարդկանց՝ իրանց ուրիշ գիր վերցնել: Մէկ
10 տարեկան է, միւսը 8 տարեկան: Նրանք
հայրը Տրապիզոնի կոտորածի ժամանակ սպան-
վեց: Ցանկացողները հասցէն կարող են իմանալ
«Մշակի» խմբագրատանը: 4—5

ANCAIS N. PAQUET ET C-ie

ՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ը ԵՒ ԸՆԿ.

ԸՆՖԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թական 25/6-ի չորեքշաբթիից,

Թո՛ղ Տրապիզոն, Սամսոն և Պոլլոս Մեկնում է Բաթում
ԲՐԻՍՈՒՄՈՒՄ չորեքշաբթի, նստապետ ԳԱՐԻԲԿ: Ն
գաւում, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ
դռնիցան տոմսակներ տրվում են սովորականին
համարները տեղեկութիւններ ստանալու համար
տարներին
Բրէլի միայն: ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկեցող
միտաբա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Գլխարանին, Կոլոբա
Երկիր Զերեքնորդերին: (Է. չ. չ.) 7—20

ԳՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՐՆ

Ո Ս Ե Ն Ի

և պատրաստվում գիմնապիա, բնական և աշ-
Կարբեա. (Է. չ.) 4—10

Տ Ե Ս Ա Ի

Ա Դ Զ Ի Կ Ը

վէպ, 755 երես)

ՕՊԷԿ (սովեթազմ 2 բուրժի)

(«Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրա-
ստեանցի մօտ, Ա. Ի. Աղամովի գրասենեակ
ճառատնոցում:
редакция „Мшакъ“: 5—10

ՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑՈՒՄ

Օ Գ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՆԱՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԻՆ

ԵՒ ԼՐԱՅՐԱԾ ՀՐԱՅՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՂ, Յ Բ. 70 ԿՈՊԷԿ

и дополненное издание

НАУЧНОГО СБОРНИКА

АВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ.

нашее болѣе 140 статей разнообразнаго содержанія в
накопавшихъ съ одной стороны съ ужасающими бѣ-
овыми и культурными условіями жизни армяна в
ы двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело-
а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ
армяна въ Трѣбизондѣ 1895 г.“ И. К. Айвазов
а.

пересылкой 3 р. 70 к.

и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.

му изданію «Вратской помощи», благоволять поспѣ-
ствующимъ цѣли сборника, перепечатать настоящ

Завѣд. ред. Гр. Джаншидзе